թար աղգն. ոչ լալոյ և ոչ հառաչելոյ, ոչ պաղատելոյ և ոչ աղաչելոյ կու նայէր. այլ իւր գոռոզութեամբ և հնարիւք սատանայիւք առնէր զինչ և կամէր։ Արդ հայցեմք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ վասն մեր խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ և յարեաւ... որ նա զիւր առատ ողորմութեամբ և մարդասիրութեամբ՝ զպեղծ և զանիծեալ բերանն բացեալ զառիւծուն՝ կալցէ կորեսցէ և զգլուխն կործանեսցէ ի ձորն անդնդային, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ, և զմեզ զամենեսեան զհաւատացեալսն աղատեսցէ ի նորա անհաւատոյն ձեռանէն. ամէն։ Արդ վասն խնդրելոյ եղբօրս իմոյ Բան Միսքոյ որդւոյ Պր. Քրիստոֆ Մուսթաֆային, ի սուրբ եկեղեցին ի քաղաքն Զամոսցայ, վասն իւր արեւուն և ընկերոջն և դուստրորդոցն և ծնողացն նընչեցելոց։.. Արդ գրեցաւ ի յաբեթական մեծ տումարիս ՌՃԲ ամին և ի մայիս 22ին. ի հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տէր Տէր Փիլիպպոս կաթողիկոսին, ի յառաջնորդութեան խառնակի ժամուն ոչ այս և ոչ այն, այլ մնացեալ վասն գալոյ Պր. Թորոսովից Տէր Նիկողայոսին, և ի թագաւորութեան Ե. Քաժիմիրին։ Գրեաց զսա խեղճ և անճարակ մեղաւոր և անարժան ծառայ ոտացներուդ կոխան Վարդերես, որդոյ Պր. Քրիստոֆ Մուսթաֆային։... [Ժամագիրք ի կայսեր. գրատան Վիեննայ]։

## 1655.

Ողորմութեամբն Աստուծոյ սկիզբն ար(արաք) ճաշոցն, Թվ. ՌՃԳ, ապրիլ 26, օրն չորեքշաբթի, ցինանց, առաջ մէկ շաբաթ քան զՀամբարձումն, և մինչեւ ցայս վայր կատարեցաք, Գայիանեանց տօնի, մայիսի 23, ի փառս Քրիստոսի Աստուծոյ. ձեռամբ անարժան Անտոն եպիսկոպոսի և վարդապետի, ի քաղաքն Եազլովցայ, ի դուռն Հաճակատարի։

Յայս հրաշափառ մեծի տօնիս՝
Քեզ երանի որ հանդիպիս
Լուսափրթիթ բուրաստանիս.
Յորժամ ի ծունրը խոնարհիս,
Սիրով հոգւոյդ յԱստուած հրպիս,
Յայնժամ յիշեա դու զեղկելիս
Զայս անպիտան Իլովցիս,
Զմեղաք ծածկեալս ի մէջ տղմիս
Անտոն անուն վարդապետիս,
Բայց անուամբ կոչողիս.
Եւ եմ չարեաք լրցեալ գերիս։
Հազար հարիւր երեք թըւիս՝
Յորժամ հասայ ի յայս տեղիս,
Մայիս ամսոյս երեսունիս.
Աւուր երեքշաբաթիս։ Ամէն։

Հոգի սուրբ, յօգնեա և աջողեա անարժան գրչիս Անտոն եպիսկոպոսի, սպասաւորիս Սրբոյ Խաչին։ Աղաչեմ և խնդրեմ ի քէն բարերար և բազումողորմ Աստուած, վասն քո սուրբ չարչարանաց, զի զօրացուսցես զիս զանարժանս ի անկ ելանել, որպէս ի սկիզբն զօրացուցեր, մարդասէր, նոյնպէս տպաւորեա Ս. Հոգիդ, զի յօգնութեամբն հասից մինչ ի վերջն. զի յոյժ ծանր թուի ինձ այս սակաւմնաց գիրս կատարել. և քո սուրբ և աքանչելի անուանն վերասկսանիմ, կենսաբեր Ս. Խաչին աստուածաշունչ գիրս